

**Մարդու իրավունքների և հիմնարար
ազատությունների պաշտպանության կոնվենցիայի
Թիվ 3 արձանագրություն, որով փոփոխվում են
Կոնվենցիայի Հոդվածներ 29-ը, 30-ը և 34-ը**

Ոչ պաշտոնական թարգմանություն

Ստրասբուրգ, 6.V.1963թ.

Կոնվենցիայի սկզբնական տեքստը փոփոխվել է Թիվ 3 արձանագրության (ԵՆՊ Թիվ 45) համաձայն, որն ուժի մեջ է մտել 1970թ. սեպտեմբերի 21-ին: Սույն Արձանագրությամբ փոփոխված կամ լրացված բոլոր դրույթները փոխարինվել են Թիվ 11 արձանագրությամբ (ԵՆՊ Թիվ 155)՝ վերջինիս 1998թ. նոյեմբերի 1-ին ուժի մեջ մտնելուց հետո:

Եվրոպայի խորհրդի անդամ հանդիսացող ներքոստորագրյալ կողմերը,

Նկատի առնելով 1950թ. նոյեմբերի 4-ին Հռոմում ստորագրված Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի ընթացակարգին վերաբերող որոշ դրույթների փոփոխման նպատակահարմարությունը,

Համաձայնեցին հետևյալի շուրջ.

Հոդված 1

- 1 Կոնվենցիայի Հոդված 29-ը չեղյալ է համարվում:
- 2 Կոնվենցիայում ներառվում է հետևյալ դրույթը.

«Հոդված 29

Հոդված 25-ին համապատասխան ներկայացված գանգատն ընդունելուց հետո Հանձնաժողովը կարող է, այնուամենայնիվ, միաձայն որոշում ընդունել մերժելու գանգատը, եթե դրա քննության ընթացքում հայտնաբերում է Հոդված 27-ով նախատեսված գանգատների անընդունելիության հիմքերից որևէ մեկի առկայությունը:

Նման դեպքում որոշումն ուղարկվում է կողմերին:»

Հոդված 2

Կոնվենցիայի Հոդված 30-ում «Ենթահանձնաժողով» բառը փոխարինվում է «Հանձնաժողով» բառով:

Հոդված 3

- 1 Կոնվենցիայի Հոդված 34-ի սկզբնամասում ավելացվում է հետևյալը.
«Հոդված 29-ի դրույթներով նախատեսված պայմանների բավարարման դեպքում...»
- 2 Նույն Հոդվածի վերջից հանվում է «Ենթահանձնաժողովը որոշումներ է կայացնում անդամների մեծամասնությամբ» նախադասությունը:

Հոդված 4

- 1 Սույն Արձանագրությունը բաց է Կոնվենցիան ստորագրած Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների համար, որոնք կարող են կողմ դառնալ այն.
 - ա. ստորագրելով՝ առանց վավերացմանը կամ ընդունմանը վերաբերող վերապահման, կամ
 - բ. ստորագրելով՝ վավերացմանը կամ ընդունմանը վերաբերող վերապահումով, հետագայում վավերացնելով կամ ընդունելով:

Վավերացման կամ ընդունման փաստաթղթերն ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:

-
- 2 Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում Կոնվենցիայի բոլոր անդամ պետությունների՝ սույն հոդվածի պարբերություն 1-ի դրույթների համաձայն սույն Արձանագրության կողմ դառնալուց անմիջապես հետո:
- 3 Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին ծանուցում է.
- ա. առանց վավերացմանը կամ ընդունմանը վերաբերող վերապահման յուրաքանչյուր ստորագրման մասին,
 - բ. վավերացմանը կամ ընդունմանը վերաբերող վերապահումով յուրաքանչյուր ստորագրման մասին,
 - գ. վավերացման կամ ընդունման յուրաքանչյուր փաստաթղթի ի պահ հանձնման մասին,
 - դ. սույն հոդվածի պարբերություն 2-ի համաձայն սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու մասին:
- Ի հաստատումն վերը նշվածի՝ ներքոստորագրյալները, համապատասխան իրավասություններով օժտված, ստորագրել են սույն Արձանագրությունը:
- Կատարված է Ստրասբուրգում, 1963 թվականի մայիսի 6-ին, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են, մեկ բնօրինակով, պահպանվում են Եվրոպայի խորհրդի արխիվներում: Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը հաստատված պատճեններն ուղարկում է Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետությանը: